ԻՄԱՑԵՔ ՁԵՐ ՆԵՐԳԱՂԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դուք իրավունք ունեք դիմելու և ապահովելու բնակարան՝ առանց ձեր ներգաղթային կարգավիճակը հայտնելու: Կալիֆորնիայի օրենքն արգելում է բնակարան տրամադրողներին հարցնել ձեր ներգաղթային կարգավիճակի մասին, եթե դուք չեք դիմում դաշնային կառավարության կողմից ֆինանսավորվող մատչելի բնակարանային ծրագրի համար: Բացի այդ, բնակարան տրամադրողները չեն կարող ահաբեկել կամ ճնշել ձեզ՝ սպառնալով կամ կիսելով տեղեկություններ ձեր ներգաղթային կարգավիճակի մասին ICE-ի, իրավապահ մարմինների կամ այլ պետական գործակալությունների հետ:

Դուք իրավունք ունեք օգտվելու շտապ բժշկական օգնությունից: Դաշնային օրենքներն ու կանոնակարգերն ապահովում են բոլոր մարդկանց, ներառյալ անփաստաթուղթ ներգաղթյալների իրավունքները՝ օգտվելու շտապ բժշկական օգնությունից:

Դուք իրավունք ունեք ունենալու ոտնձգություններից և խտրականությունից զերծ աշխատավայր: Կալիֆորնիայի օրենքի համաձայն՝ դուք պաշտպանված եք ոտնձգություններից և խտրականությունից՝ հիմնված ձեր ազգային ծագման, նախնիների, ռասայի, էթնիկ պատկանելության և այլ պաշտպանված հատկանիշների վրա: Ձեր գործատուն չի կարող սպառնալ դիմել ներգաղթային մարմիններին՝ որպես վրեժխնդրություն աշխատավայրում ոտնձգությունների կամ խտրականության մասին հաղորդում տալու համար: Ձեր գործատուն նաև իրավունք չունի հարցնելու կամ ուսումնասիրելու ձեր ներգաղթային կարգավիճակը, եթե նա պարտավոր չէ դա անել դաշնային ներգաղթային օրենքի և կանոնակարգերի համաձայն, և դուք պարտավոր չեք կիսել այս տեղեկատվությունը:

Դուք իրավունք ունեք պահանջելու ընկերություններից դադարեցնել ձեր տվյալների վաճառքը կամ ջնջել ձեր տվյալները: Կարևոր է հասկանալ ձեր տվյալների գաղտնիության իրավունքները, և օգտակար կարող է լինել նվազեցնել այն ընկերությունների թիվը, որոնք պահպանում կամ վաճառում են ձեր մասին տվյալները: Այս իրավունքների և դրանք իրականացնելու վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք oag.ca.gov/privacy/ccpa:

Դուք իրավունք ունեք ունենալու փաստաբան: Եթե ձերբակալվեք ոստիկանության կողմից, դուք իրավունք ունեք պետության կողմից նշանակված փաստաբանի: Եթե ձեզ կալանավորի ICE-ը, դուք իրավունք ունեք խորհրդակցելու փաստաբանի հետ, սակայն կառավարությունը պարտավոր չէ ձեզ տրամադրել մեկը: Դուք կարող եք խնդրել անվճար կամ ցածր գնով այլընտրանքների ցանկ: Ձեր մոտակայքում իրավաբանական օգնության կազմակերպություն գտնելու համար այցելեք lawhelpca.org:

Դուք իրավունք ունեք ստանալու ձեր ոստիկանական զեկույցը: Նահանգային և տեղական իրավապահ- մարմինները չեն կարող հանցագործության զոհից մերժել իր հանցագործության զեկույցին հասանելիությունը այն պատճառով, որ զոհը չի կարող ապացուցել երկրում օրինական գտնվելը:

Ձեր երեխան ունի անվճար հանրային կրթություն ստանալու իրավունք՝ անկախ ներգաղթային կարգավիճակից: Նրանք նաև իրավունք ունեն գտնվելու հանրային դպրոցի ուսումնական միջավայրում՝ զերծ խտրականությունից, ոտնձգություններից, բուլինգից և ահաբեկումից: Դպրոցները պետք է ընդունեն աշակերտի ծնողի կամ խնամակալի կողմից ներկայացված տարբեր փաստաթղթեր՝ տարիքը և բնակությունը հաստատելու համար: Քաղաքացիության/ներգաղթային կարգավիճակի մասին տեղեկությունները երբեք անհրաժեշտ չեն դպրոցում գրանցվելու համար: Դուք պարտավոր չեք տրամադրել տեղեկություններ անձնագրերի կամ վիզաների վերաբերյալ, կամ երեխայի, ծնողի, խնամակալի կամ ընտանիքի այլ անդամի ներգաղթային կարգավիճակի վերաբերյալ: Եվ դուք պարտավոր չեք տրամադրել սոցիալական ապահովության համար կամ այլ քարտ՝ ինչպես գրանցման, այնպես էլ անվճար կամ զեղչված գնով դպրոցական նախաճաշի և ճաշի համար:

Նահանգային և տեղական իրավապահ մարմինները <u>չեն կարող</u> հարցնել ձեր ներգաղթային կարգավիճակը ներգաղթային իրավակիրառման նպատակներով: Կալիֆորնիայի օրենքը հստակորեն արգելում է իրավապահ մարմիններին հետաքննել անձի ներգաղթային կարգավիճակը ներգաղթային իրավակիրառման նպատակներով:

Նահանգային և տեղական իրավապահ մարմինները <u>չեն կարող</u> կիսել ձեր անձնական տեղեկությունները ներգաղթային իրավակիրառման նպատակներով: Սա ներառում է ձեր տան կամ աշխատանքի հասցեն ներգաղթային նպատակներով, եթե այդ տեղեկությունները հասանելի չեն հանրությանը կամ եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում նախկին քրեական ձերբակալություններին, դատավճիռներին կամ նմանատիպ քրեական պատմությանը:

Նահանգային և տեղական իրավապահ մարմինները <u>չեն կարող</u> օգնել ICE-ին ներգաղթային իրավակիրառման հարցերում, շատ սահմանափակ բացառություններով: Սա նշանակում է, որ նահանգային և տեղական իրավապահ մարմինները չեն կարող հետաքննել, հարցաքննել, ձերբակալել և կալանավորել ձեզ, եթե նրանք չեն հանդիսանում դաշնային համատեղ աշխատանքային խմբի մաս, որտեղ խմբի հիմնական նպատակը ներգաղթային իրավակիրառումը չէ:

Ներգաղթային Օգնության Ռեսուրսներ

- Law Help CA: lawhelpca.org
- Immigration Law Help: immigrationlawhelp.org

Բողոք Ներկայացնել

- Եթե կարծում եք, որ ձեր իրավունքները խախտվել են, հաղորդեք դրա մասին Կալիֆորնիայի Արդարադատության Նախարարությանը՝ oag.ca.gov/report:
- Եթե կարծում եք, որ ենթարկվել եք խտրականության, ոտնձգությունների կամ վրեժխնդրության, հաղորդեք դրա մասին Կալիֆորնիայի Քաղաքացիական Իրավունքների Նախարարությանը՝ calcivilrights.ca.gov/complaintprocess/: